ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/50

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.03.2020թ. թիվ 26/26-1/3705-2020 գրությամբ «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 06.03.2020թ. թիվ 1.4/1831-2020 գրության հիման վրա, 11.03.2020թ. թիվ 26/26-1/3705-2020 գրությամբ նախաձեռնել է «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչը 19.03.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ միջնորդել է 20.03.2020թ. նիստը հետաձգել՝ գործի նյութերին ծանոթանալու և մասնագիտական դիրքորոշում ներկայացնելու համար:

«ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը մերժել է՝ հիմնավորելով, որ վերջինիս կողմից չի կարող ներկայացվել այնպիսի փաստարկներ, որոնք գործի ելքով կարող են էական նշանակություն ունենալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/50 ընթացակարգի շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.03.2020թ. թիվ 1.4/1831-2020 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից հայտարարվել է թիվ ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ն:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից

առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգ 32-րդ կետի 18-րդ ենթակետի՝ գնման ընթացակարգը չափաբաժիններով կազմակերպվելու դեպքում հայտերի գնահատումը և ընտրված մասնակցի որոշումն իրականացվում է ըստ առանձին չափաբաժինների, ինչով պայմանավորված նույն կարգի 47-րդ կետով ծանուցվել է մասնակցին շտկելու 3.1 Հավելվածով սահմանված անհամապատասխանությունները: Կարգի 48-րդ կետի համաձայն՝ եթե Կարգի 47-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ղեկավարվելով 48-րդ կետով՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած որոշմամբ մերժել է «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված 13-րդ չափաբաժնի մասով հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/50 ընթացակարգի շրջանակներում 20.03.2020թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/50 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից տնտեսական և սանիտարահիգենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***<u>25.11.2019թ.</u>***:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.03.2020թ. թիվ 26/26-1/3705-2020 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի 06.03.2020թ. թիվ 1.4/1831-2020 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և

(կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

ՀՀ Ազգային ժողովի կողմից տնտեսական և սանիտարահիգենիկ ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակվել է ***25.11.2019թ.***:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.12.2019թ. թիվ 2 արձանագրության 7-րդ կետի համաձայն՝ 4-րդ, 7-րդ, 8-րդ և 13-րդ չափաբաժինների մասով «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 27.01.2020թ. ժամը 10:30 էլ. փոստի միջոցով

որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.01.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված Հավելված 3.1-ում առկա են եղել անհամապատասխանություններ և գնահատող հանձնաժողովը ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով կասեցրել է նիստը և առաջարկել է ընկերությանը երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել առկա անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.03.2020թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ 07.02.2020թ. դրությամբ «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ն պետք է ներկայացներ Հավելված 3.1-ի 4-րդ և 8-րդ չափաբաժինների տեխնիկական բնութագրերի շտկված տարբերակները, սակայն վերջինս ներկայացրել է նաև 7-րդ և 13-րդ չափաբաժինները, որոնց մասով անհամապատասխանություններ չէին արձանագրվել և մասնակիցը չէր ծանուցվել շտկելու վերաբերյալ: Սակայն, «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ն ուղղելու փոխարեն փոխել է 13-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը, ներկայացնելով այլ տեխնիկական բնութագիր, որը հակասում է նախորդ հայտով ներկայացրած և հրավերով պահանջված տեխնիկական բնութագրերին:

Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը սահմանում է, որ **<u>տեղեկագիրը</u> նույն օրենքով նախատեսված հրատարակման ենթակա տեղեկատվության <u>հրապարակման նպատակով</u> *<u>www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է</u>***:

Օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>գնումների պլանը</u>***, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում ***<u>պարտադիր հրապարակում է տեղեկագրում</u>***, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

Կարգի 16-րդ կետի համաձայն՝ **գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Գնման պահանջի ծագման օրը պետական գաղտնիք չպարունակող գնումների դեպքում հաստատված կամ փոփոխված գնումների պլանի հրապարակման օրն է,** իսկ պետական գաղտնիք պարունակող գնումների դեպքում՝ գնումների պլանի հաստատման կամ փոփոխման օրն

է: Եթե տվյալ տարվա ընթացքում գնումների սկզբնական պլանում չներառված, լրացուցիչ գնումը կատարելու համար նախատեսվում են ֆինանսական միջոցներ, ապա գնումների պլանում կատարվում է լրացում:

Կարգի 17-րդ կետը սահմանում է, **որ <u>գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը</u> սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ <u>նաև հրապարակված,</u> գնումների պլանի առկայությունն է:**

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը 11.03.2020թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/3708-2020 գրությամբ դիմել է ՀՀ Ազգային ժողովին՝ խնդրելով տրամադրել ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող ծառայության մասով հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող համապատասխան հղումը և/կամ կայքից արտատպված փաստաթուղթը:

Ի պատասխան վերը նշված գրության՝ ՀՀ Ազգային ժողովը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 12.03.2020թ. գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպված ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող տնտեսական և սանիտարահիգենիկ ապրանքների ձեռքբերման գնումների պլանը հաստատվել է 2020 թվականի փետրվարի 03-ին, որը արտացոլված և հրապարակված է համարվում armeps.am/ppcm համակարգում (գնումների պլաններ դաշտում)՝ կցելով armeps.am/ppcm համակարգից արտահանված փաստաթուղթը:

Այսպիսով՝ վերը նշված իրավական կարգավորումների համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է, որը օրենքով սահմանված կարգով Պատվիրատուի կողմից հրապարակվում է տեղեկագրում, իսկ տեղեկագիրը սույն օրենքով նախատեսված հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակման նպատակով www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքն է, մինչդեռ արձանագրում եմ, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից կազմակերպվել է ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-20/6 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ առանց իրավական հիմքի, այն է՝

առկա չէ սահմանված պահանջներին համապատասխան հաստատված և www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում հրապարակված գնումների պլան: Արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16-րդ և 17-րդ կետերով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով այն փաստական հանգամանքը, որ Ընթացակարգը կազմակերպվել է վերը նշված իրավակարգավորումների խախտմամբ, հետևաբար գտնում եմ, որ իրավական հիմքի բացակայության պայմաններում կազմակերպված ոչ իրավաչափ ընթացակարգից բխող բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս ընկերության, ուստի հնարավոր չէ արձանագրել «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ի կողմից Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտման փաստը, ուստիև գտնում եմ, որ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 11.03.2020թ. թիվ 26/26-1/3705-2020 գրությամբ «ԷՍԴԻԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**